## Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

**ք.Երևան** **«14» 01. 2025թ.**

**Օրակարգ՝**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հանդերձանքի** ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-15 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

**2. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊԸ-ին ու Էպսիլոն Ինվեսթ ՍՊԸ-ին առաջարկել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Էպսիլոն Ինվեսթ ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է ժամանակին և գնահատվում է բավարար, իսկ ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է, սակայն գնահատվում է անբավարար՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526Ն Որոշման կարգի 42-րդ կետի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊԸ-ի սկզբնական հայտում բացակայում էր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, որի շտկման փոխարեն ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊԸ-ի կողմից կցվել է ՀՈՒԴԻՍ ՍՊԸ-ի կայքէջի հղումը, որը ստորագրված է ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊԸ-ի լիազորի կողմից և միաժամանակ նշված է ՀՈՒԴԻՍ ՍՊԸ-ի տնօրենի անուն ազգանունը:

**Հանձնաժողովը որոշեց՝**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-15 ծածկագրով գնման ընթացակարգի 1,3,5,6,11,19 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ ՍՊԸ-ին. 4 և 20 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել ՀՈՒԴԻՍ ՍՊԸ-ին, 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ին, 8,13,14 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել Վինդորան ՍՊԸ-ին, 10-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Վան-97 ՍՊԸ-ին, 12-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել Էպսիլոն Ինվեսթ ՍՊԸ-ին, 15,16,17,18 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ին: 2 և 9 չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ: Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին կառաջարկվի կնքել պայմանագիր:

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Հ-15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. և բ. ենթակետերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, ինչպես նաև միջոցներ կձեռնարկվեն պարզելու համար ՖԱԲՐԻԿԱՐՏ ՍՊԸ-ի և ՀՈՒԴԻՍ ՍՊԸ-ի միջև փոխկապակցվածությունը:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 ։

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | Տ. Բաբայան |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | Խ. Հարությունյան |
| | Ջ. Տիգրանյան |
| *Քարտուղար՝* | Հ. Ասատրյան |